ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«26» Հոկտեմբերի 2020թ. N ՄՈ/426-2020

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 2-Ի N ՄՈ/160-2019 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Արմավիրի Մովսես Սիլիկյանի անվան N 6 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2020 թվականի հոկտեմբերի 16-ի N 33, «Արշալույսի Ս.Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2020 թվականի հոկտեմբերի 15-ի N 114 և «Շենիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2020 թվականի հոկտեմբերի 20-ի գրությունները.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2019 թվականի մայիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների խորհուրդների անվանական կազմերը հաստատելու մասին N ՄՈ/160-2019 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) որոշմամբ հաստատված N 4 հավելվածի 7-րդ կետում «Միերյան Լուսինե» բառերը փոխարինել «Վարդերեսյան Անահիտ» բառերով, 8-րդ կետում «Կարապետյան Դուստրիկ» բառերը փոխարինել «Վարդանյան Անահիտ» բառերով,
   2) որոշմամբ հաստատված N 66 հավելվածի 7-րդ կետում «Ֆիդանյան Կարինե» բառերը փոխարինել «Ճուղուրյան Նաիրուհի» բառերով,
   3) որոշմամբ հաստատված N 107 հավելվածի 6-րդ կետում «Վարդանյան Ժենյա» բառերը փոխարինել «Հարությունյան Նինա» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Մարզպետ՝ ***Հ.Մաթևոսյան***

26.10.2020

X

VERIFIED OCSP 26.10.2020 17:30:46 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230